ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---------- 2025 թվականի N ----------Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N 383-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 23-ի «Բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական, մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու կարգը, պայմանները և բուհերի ու մասնագիտությունների ցանկը սահմանելու մասին» N 383-Ն որոշման՝

1) «(անվճար) ,» բառը և ստորակետը փոխարինել «, սույն որոշման N 2 հավելվածում տվյալ մասնագիտության համար հատկացված տեղերում ընդունելության մրցույթի արդյունքներով» բառերով.

2) հավելված N 1-ի՝

ա. 1-ին կետում «առկա ուսուցմամբ պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)» բառերը հանել.

բ. 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2. Սույն կարգով քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրվում է սույն որոշման N 2 հավելվածում սահմանված բուհերում ըստ կրթական աստիճանների (բակալավր, մագիստրատուրա, ասպիրանտուրա) առկա ուսուցմամբ ԲՏՃՄ ուղղությունների համապատասխան մասնագիտություններով յուրաքանչյուր ուսումնական տարվա համար սահմանված՝ պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ տեղերի շրջանակում՝ սույն որոշման N 2 հավելվածում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքով տվյալ մասնագիտության համար հատկացված տեղերում ընդունելության մրցույթի արդյունքներով ընդունվելու դեպքում.

3) հավելված N 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026-2027 ուսումնական տարվանից ընդունվող քաղաքացիների վրա:

Հավելված

ՀՀ կառավարության 2025 թվականի
---------- -ի N ----------Ն որոշման

« Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
մարտի 23-ի N 383-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՒՀԵՐԻ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ, ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ (ԲՏՃՄ) ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Աղյուսակ 1

Բակալավրի կրթական աստիճան

Դասիչը	**Բուհը, մասնագիտությունը, կրթական ծրագիրը**	**Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավուն տվող տեղեր**
1	*2*	*3*
Ընդամենը		**101**
1.Երևանի պետական համալսարան		**57**
051101.00.6	Կենսաբանություն	
	051101.01.6 Կենսաբանություն	5
051201.00.6	Կենսաքիմիա	
	051201.03.6 Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա	5
053101.00.6	Քիմիա	
	053101.01.6 Քիմիա	4
054101.00.6	Երկրաբանություն	
	054101.01.6 Երկրաբանություն	3

054201.00.6	Աշխարհագրություն	
	054201.01.6 Աշխարհագրություն	2
055101.00.6	Ֆիզիկա	
	055101.01.6 Ֆիզիկա	12
055102.00.6	Ռադիոֆիզիկա	
	055102.02.6 Ռադիոֆիզիկա և համակարգչային տեխնոլոգիաներ	12
056101.00.6	Մաթեմատիկա	
	056101.01.6 Մաթեմատիկա	7
056201.00.6	Վիճակագրություն	
	056201.02.6 Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	7
2. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան		**44**
061102.00.6	Ծրագրային ճարտարագիտություն	
	061102.01.6 Ծրագրային ճարտարագիտություն	7
061104.00.6	Տեղեկատվական համակարգեր	
	061104.02.6 Արհեստական բանականությամբ համակարգեր	4
061901.00.6	Տեղեկատվական անվտանգություն	
	061901.01.6 Տեղեկատվական անվտանգություն	6
071101.00.6	Քիմիական տեխնոլոգիա	
	071101.01.6 Քիմիական տեխնոլոգիա	3
071301.00.6	Էներգետիկա	
	071301.02.6 Ատոմային էներգետիկա	3
071302.00.6	Էլեկտրատեխնիկա	
	071302.02.6 Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա և էլեկտրատեխնոլոգիաներ	5
071401.00.6	Էլեկտրոնիկա	
	071401.02.6 Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա	3
071403.00.6	Ռադիոտեխնիկա և կապ	
	071403.03.6 Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում	5

071503.00.6	Մեքենագիտություն	
	071503.03.6 Ռոբոտատեխնիկա և մեխատրոնիկա	3
071603.00.6	Ավիացիոն և հրթիռային տեխնիկա	
	071603.06.6 Ավիատիեզերական ճարտարագիտություն	4
072401.00.6	Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում	
	072401.01.6 Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում	1

Աղյուսակ 2

Մագիստրոսի կրթական աստիճան

Դասիչը	**Բուհը, մասնագիտությունը, կրթական ծրագիրը**	**Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավուն տվող տեղեր**
1	*2*	*3*
Ընդամենը		**50**
1. Երևանի պետական համալսարան		**23**
051101.00.7	Կենսաբանություն	
	051101.15.7 Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա	1
051201.00.7	Կենսաքիմիա	
	051201.02.7 Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա	1
053101.00.7	Քիմիա	
	053101.01.7 Քիմիա	1
	053101.09.7 Նյութագիտություն	1
054101.00.7	Երկրաբանություն	
	054101.03.7 Երկրաֆիզիկա, ջրաերկրաբանություն, ճարտարագիտական երկրաբանություն	1
054201.00.7	Աշխարհագրություն	

	054201.03.7 Ջրաօդերևութաբանություն	1
055101.00.7	Ֆիզիկա	
	055101.03.7 Տեսական ֆիզիկա	1
	055101.07.7 Միջուկային ֆիզիկա և ատոմային էներգետիկա	1
055102.00.7	Ռադիոֆիզիկա	
	055102.01.7 Ռադիոֆիզիկա	2
	055102.04.7 Էլեկտրադինամիկական պրոցեսների համակարգչային մոդելավորում և նմանակում	1
056101.00.7	Մաթեմատիկա	
	056101.09.7 Մաթեմատիկա և կիրառություններ	2
056201.00.7	Վիճակագրություն	
	056201.04.7 Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	2
061101.00.7	Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	
	061101.04.7 Դիսկրետ մաթեմատիկա և տեսական ինֆորմատիկա	2
061104.00.7	Տեղեկատվական համակարգեր	
	061104.04.7 Տեղեկատվական համակարգերի կառավարում	1
061105.00.7	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	
	061105.02.7 Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում	2
071401.00.7	Էլեկտրոնիկա	
	071401.02.7 Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա	2
071403.00.7	Ռադիոտեխնիկա և կապ	
	071403.02.7 Հեռահաղորդակցություն	1
2. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան		**24**
061102.00.7	Ծրագրային ճարտարագիտություն	

	061102.01.7 Ծրագրային ճարտարագիտություն	5
061104.00.7	Տեղեկատվական համակարգեր	
	061104.05.7 Արհեստական բանականությամբ համակարգեր	2
061901.00.7	Տեղեկատվական անվտանգություն	
	061901.01.7 Տեղեկատվական անվտանգություն	4
071101.00.7	Քիմիական տեխնոլոգիա	
	071101.03.7 Օրգանական նյութերի քիմիական տեխնոլոգիա	1
071301.00.7	Էներգետիկա	
	071301.02.7 Ատոմային էներգետիկա	1
071302.00.7	Էլեկտրատեխնիկա	
	071302.02.7Էլեկտրատեխնիկա, էլեկտրամեխանիկա և էլեկտրատեխնոլոգիաներ	2
071402.00.7	Ավտոմատացում	
	071402.01.7 Ավտոմատացում	3
071403.00.7	Ռադիոտեխնիկա և կապ	
	071403.02.7 Հեռահաղորդակցություն	3
071503.00.7	Մեքենագիտություն	
	071503.04.7 Ռոբոտատեխնիկա և մեխատրոնիկա	1
071603.00.7	Ավիացիոն և հրթիռային տեխնիկա	
	071603.02.7 Ավիատիեզերական ճարտարագիտություն	1
072401.00.7	Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում	
	072401.01.7 Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում	1
1. Հայ-ռուսական համալսարան		**1**
071301.00.7	Էներգետիկա	
	071301.05.7 Այլընտրանքային էներգետիկա	1
2. Հայաստանի Ամերիկյան համալսարան		**1**

071802.00.7	Արդյունաբերական ճարտարագիտություն	
	071802.01.7 Արդյունաբերական ճարտարագիտություն	1
3. Հայաստանում ֆրանսիական համալսարան		**1**
061104.00.7	Տեղեկատվական համակարգեր	
	061104.05.7 Արհեստական բանականությամբ համակարգեր	1

Աղյուսակ 3

Հետբուհական կրթական աստիճան (ասպիրանտուրա)

Դասիչը	**Բուհը, մասնագիտությունը**	**Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավուն տվող տեղեր**
1	*2*	*3*
Ընդամենը		**7**
1. Երևանի պետական համալսարան		**5**
Ա.04.21	Լազերային ֆիզիկա	1
Ա.04.03	Ռադիոֆիզիկա	1
Ա. 04.10	Կիսահաղորդիչների ֆիզիկա	1
Բ.00.03	Օրգանական քիմիա	1
Գ.00.04	Կենսաքիմիա	1
2. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան		**1**

Ե.14.04	Վերականգնվող և այլընտրանքային էներգիայի աղբյուրներով էներգետիկ կայանքներ	1
3. Հայ-ռուսական համալսարան		**1**
Գ.00.02	Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա	1
Ե.12.01	Ռադիոտեխնիկա, ռադիոհաճախականային սարքավորումներ, համակարգեր, տեխնոլոգիաներ	1